



ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

ՎԱՅԵ ՎՐԴ. ԻԳՆԱՏԻՈՍՅԱՆ, «ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐԸ»,
ՎԵՆԵՏԻԿ, Ս. ՂԱԶԱՐ, 1977 թ., 36 էջ

Մարտի հայոց ա. Թադեոս եկեղեցու հոգևոր հովիվ Վաչե վրդ. Իգնատիոսյանը 1977 թվականին ս. Ղազարի տպարանից լույս ընծայեց 36 էջանոց «Աստվածամայրը» գրքուկը:

Գիրքը բացվում է Շնորհք պատրիարք Գալուստյանի գնահատական խոսքով և հեղինակի առաջաբանով, ուր նշվում են սույն գրքի շարադրման պատճառն ու նպատակը:

Գրախոսվող գիրքը բաղկանում է երեք գլուխներից, որոնք իմաստով և բովանդակությամբ լրացնում են իրար:

Առաջին գլուխը կրում է «Աստվածամայրը» վերնագիրը (էջ 7—22), որն ունի հետևյալ ենթավերնագրերը. «Ս. Կույս Մարիամը և Աբրահամը», «Ս. Կույսը և Զաքարիա քահանան», «Հիսուս և իր մայրը», «Աստվածամայրը մեր ամենուն մայրն է»:

Երկրորդ գլխի վերնագիրն է «Վերափոխումն սուրբ Աստվածածնի» (էջ 23—27):

Երրորդ գլուխը կրում է «Հիսուս և իր կարծեցյալ եղբայրները» վերնագիրը, (էջ 29—36), որն ունի հետևյալ ենթավերնագրերը. «Որո՞նք էին Հիսուսի կարծեցյալ եղբայրները», «Ինչու չեն հիշված Հիսուսի եղբայրները» (Ղուկ. Բ 41), «Մարիամ իր անդրանիկ Որդին ծնավ» (Ղուկ. Բ 7), «Եվ Հովսեփ չէր գիտեր զայն՝ մինչև իր անդրանիկ Որդին ծնավ» (Մատթ. Ա 25):

Սույն գիրքը շարադրելիս հեղինակը օգտվել է իր թեմայի վերաբերյալ հայ և օտար համապատասխան աղբյուրներից, որոնց մասին իմանում ենք գրքի վերջում գետեղված «Մատենագիտություն» վերնագրից:

Վաչե վարդապետը Երուսաղեմի սրբոց Հակոբյանց վանքի միաբան է: Երկար տարիներ հովվական շնորհակալ աշխատանք է կատարում Փարիզի և Մարտեղի հայկական համայնքներում: Սույն գրքուկը հեղինակի հոգևոր կյանքի փորձառության և եկեղեցական ծառայության արդյունքն է:

Գիրքը գրված է արևմտահայ գրական լեզվով, ոճը սահուն է, դյուրընթեռնելի և պատկերավոր:

Գրքում գետեղված են Աստվածամոր չորս գեղարվեստական նկարներ՝ գիրքը ավելի հետաքրքիր դարձնելու համար: Ավելի լավ կլիներ, որ բոլոր նկարներն էլ հայ դասական և նոր նկարիչների ստեղծագործություններից գետեղվեին:

Վաչե վարդապետը շնորհակալ աշխատանք է կատարել, որ արժան է խրախուսանքի և քաջալերման: Հայր սուրբը կատարում է իր հոգևոր պարտքը հայ եկեղեցու, հայ ժողովրդի նկատմամբ ի մոտի ունենալով Պողոս առաքյալի հետևյալ ասույթը. «Արդ հատուցեք ամենեցուն զպարտս, որում զհարկս՝ զհարկն, որում զերկեղ՝ զերկեղն, որում զպատիւ՝ զպատիւն» (Հովմ. ԺԳ 7):

Երիտասարդ վարդապետը գտնվում է իր հոգևոր և մտավոր ուժերի հասունացման շրջանում: Շնորհավորում ենք նրա ստեղծագործական առաջին երախայիքը և սպասում, որ նա հանդես գա ավելի ծավալուն, հոգեշահ, սուրբ գրական ուսումնասիրություններով:

ԱՆԱՍՏԱՍ ՍԱՐԿԱՎԱԳ. ՄՈՎՍԻՍՅԱՆ